600.0070.27.03.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2019 թվականի №70Ն

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N414Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի «Հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները հաստատելու և վարձակալության վճարները սահմանելու մասին» N414Ն որոշման 1-ին կետով հաստատված N1 հավելվածում (այսուհետ՝ N1 Հավելված) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) N1 Հավելվածի 6-րդ կետում «նախավճար» բառը փոխարինել «վճար» բառով,
2) N1 Հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետում «նախավճարի» բառը փոխարինել «վճարի» բառով,
3) N1 Հավելվածի 17-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

   «3) պահանջվող վայրում (հասցեում) ենթակառուցվածք (խողովակ) չունի։»,
4) N1 Հավելվածը լրացնել հետևյալ խմբագրությամբ 17.1 կետով.

«17.1 Եթե դիմումը մերժելու հիմք է հանդիսանում սույն կանոնների 17-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված պայմանը, ապա սույն կանոնների 6-րդ կետում նշված վճարը Գերիշխող օպերատորի կողմից ենթակա է վերադարձման դիմում ներկայացրած Օպերատորին:»,

5) N1 Հավելվածի 19-րդ կետում «1-ին ենթակետով նախատեսված պայմանը» բառերը փոխարինել «1-ին կամ 3-րդ ենթակետերով նախատեսված պայմանը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
27 մարտի 2019թ.